



Պատասխանատու
Յովհաննէս Փիլիսեան

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻՈՅ

Համալրման ուղղելի են
սուր. Ղ. Գ. Պալլադաքեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԳՌԱԶՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻՈՅ ՇԱՐԱԹ 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1880

ԹԻՒ 1156

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳՂԻԱ : Տուրքիայի ինքնուրույն կարգավորումը թիւնն Պ. կրկնապատկերի աշխարհագրութեան իրրեւ յաղթանակի կընկատուի աղատական կուսակցութեան մէջ, որք և կը համարին թէ եւրոպական ներդաշնակութիւնն արդէն իր նպատակին հասած լինելով, ապագային մէջ ինչ որ ալ պատահի՝ անպատուութեան վտանգ մի չի կրնար համարուիլ :

Սակայն Պահպանողականը խորհրդարանին բացմանէ առաջ կը պատրաստուի աղատական նախարարութեան ընթացքն կասեցնելու միջոցներ հայթայթել : Լորտ Պիքմոսթրի տունը արդէն պահպանողականաց իրրեւ մի խորհրդարանէ դարձած է, ուր նախորդ նախարարութեան աշխարհագրութեան ուղին այն է Օսմանեան տէրութեան նպատակաւ բարեկամութեան դրութիւնն հաստատուն պահելով կ'որոշեն յօգուտ եւրոպական խաղաղութեան : Սոյն տեղեկութիւններն Պ. կրկնապատկերի աննպատակ երթերէ քաղելէ վերջ Տէյնթ Նիւ-յորքիւն ևս բուրժուական տարբեր ուղիներով կը խօսի իրաց վիճակին վրայ, և ի մէջ այլոց կը յայտնէ թէ, Անգլիոյ առաջին նախարար, ստիպողական պարագայներն ի նկատի առնելով խորհրդարանի բացումը ժամանակէն յառաջ առաջարկած է, նպատակ ունենալով ծանուցանել բոլոր Ազգին իւր աշխարհագրութեան յառաջիկայս բռնելու ընթացքը, և իւր գիտնալով թիւններն իրացնելու համար կարեւոր ծախսոց արտօնութիւն խնդրել, որ անշուշտ մեծամասնութեան վաւերացումէն կ'ախտալ է :

Իրանաւոր խեղճութիւնն հետզհետէ կը ստուկանայ, Հոկ. 18ին Լոնկփորդի մէջ, շէին Տըպլինի մէջ 24ին (Ն. Տ.) Կալուէյի մէջ մեծ միթիւններ խմբուելով, հողային գործոց համար կազմեալ իրլանտական Միութեան գլուխներէն մին Պ.

Բարնէլ ազգու բանախօսութիւնները ըրած է և յուզումը առանձն զանաւան սաստկացած : Եղեռնական նոր դէպք մի տեղի ունեցաւ Պանթրէն Տրումսէլ երթալու ճանապարհին վրայ, ուր անծանօթ մէկը Պ. Հիւթլինսի վրայ հրազէն մի պարպեց բայց գնդակը նորիս կառնպանին հանդիպելով խեղճը անմիջապէս մեռաւ : Երեք ժամէն զինի չրկականներէն 50 ոստիկանք ոճրատելին հասած էին, սակայն եղեռնագործն ձեռք չանցաւ : Իրլանտական միութեան ատենաբաններն խմբարաններու մէջ սաստկապէս դատապարտեցին սոյն ոճրագործութիւնը, համայն և այնպէս հողատէրք մեծ երկիւղի մէջ են, և կառավարութիւնն շարունակ կը հսկէ եղեռնագործութեանց առաջն առնելու, գիտելով քաղ զի ապստամբաց քով բազմաթիւ զէնք ամբարնած կան :

Այս ամենով հանդերձ Անգլիական կառավարութիւնն իւր ապագայ գործողութիւնքն կարծես իւր տեսութենէ մատ մի անդին չտանիր : Եւ թէպէտ բաւական տարածայնութեանց պատճառ տուաւ Ռուսական Կոլա լրագրին մէկ յօդուածն, որ կը յայտարարէր թէ Ռուսիա իրեն նպատակ ունի չգտնել Անգլիոյ հետ միանալը, սակայն արտաքին գործոց նախարար սըր Չարլզ Տիլքի Գաղղիա ուղևորելով Գաղղիոյ դաշնակցութիւնն շահելու մեծ յոյս ունենալ կը կարծուի :

ԳԱՂՂԻԱ : Մարտի 23ին հրամանագրին վրայ կցորդ նոր որոշման համեմատ Բարիզ բնակող կարմեւեան և քառնարանի միարանք իրենց վանքերէն արտաքսեցան :

Երեւակուտի և երեսփոխանական խորհրդարանաց բացումը առաջիկայ Նոյեմ. 9ին ընելու կարեւորութիւն կը տեսնուի : Կառավարութեան կողմէ 2 տարի բանտարկութեան դատապարտուեցաւ Պ. Ֆէլիքս Բիա որ արքայապանութիւնն փառաւորելու յանցանքով ձեռքակալ

ուած էր : Ասոր հակառակ հասարակորդը կը պահանջեն որ Ռուսիոյ կայսրը ի Բարիզ սպաննել փորձող Պերեզովսքին ցմահ աքսորանքէն արձակուի : Կառավարութիւնն դատաստանի ենթարկեց սոյն պահանջը ընողներէն մի քանին :

— Սաստիկ փոթորիկ մի ծագելով Անգլիոյ հետ հեռագրական յարաբերութիւններն դադրեցան :

ԲՐՈՒՍԻԱ : Պերլինի կաշէն Նախնալ լրագրին կը անուցանէ թէ Պիզմարք իշխանն յայտարարած է որ Գերմանիա չէ տրամադիր դաշնակցիլ երկէ երբեք եւրոպիոյ կողմէ որոշուի Տաճկաստանի դէմ կռուելու : մանաւանդ առաջինն ինք պիտի բողոքէ այն ամեն միջոցներու դէմ, զորս Անգլիա և Ռուսիա կամենան ձեռք ունել Թուրքիոյ դէմ : Պիզմարք իշխանն կը յարէ թէ Թուրքիա իւր պարտականութիւններն կատարելէ վերջ իրաւունք ունի իւր ամբողջութիւնն պահպանելու : Մեծ Գիւստինգիտին սոյն յայտարարութիւնն Անգլիոյ և Գաղղիոյ դահլիճներու հաղորդուեալ և համաձայն հաւանութիւն ստացեր է : Պիզմարք իշխանին օգնական Հոհենլոէ իշխանն, որ ծանրապէս հիւանդացած էր, այս վերջերս կատարեալպէս առողջացած է :

ՅՈՒՆԱՍՏԱՆ : Երեսփոխանական ժողովի բացումը տալի ունեցաւ Հոկտ. 24ին (Ն. Տ.) բացման առթիւ կարգացուած թագաւորական ճառը, Մէսթէ Պիլէ լրագրին նայելով, կ'ըսէ թէ Յունաստանի յարաբերութիւնք անցնողէն հետ յոյժ բարեւոր վիճակի մէջ են : Թէ՛ հիւլեն աղբն պէտք է երախտապէս լինի առ այն տէրութիւնն որք Պերլինի դաշնակցին ստորագրելու ատեն Յունաստանը աւելի զօրացնելու յարմար հանձնադրի զորոցնին : Սոյն որոշումը իրացնելու համար անցնողին կ'աշխատին : վասնորոյ մեր բանակը շարժման մէջ գտնու աւմենայարմար ժամանակ ընտրելիք, քանզի այսպէս կը պահանջէր մեր օգուտն և մեր սիրտ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հետիւտեց եւ աղքատը ըստ աշխարհի
եւ ըստ հրամանի Նախախնամութեան :

Ինչ է հիւրանալը ըստ աշխարհի. — ուրախութեան, հանդիսից տեսարանաց և զուարճութեց մարդ մ'է, որու բոլոր փառքը սնտուի փառասիրութեան վրայ կը կայանայ, բոլոր արժանաւորութիւնը իւր կերքերը յագեցնելու վրայ կը դառնայ, որ միմիայն իր հարստութեան չափով իւր ըզձեց սահման կը դնէ խիստ շատ ոճիրներու և գայթակղութեանց ուժով մեծ կը կուռնի նա :

Բայց հարուստ մը ըստ հրամանի Աստուծոյ : Խաղաղութեան և միմիկարութեան հրեշտակ մ'է Աստուծոյ և մարդոց մէջ տեղ գրուած, երկրային բարիքները մարդոց բաշխելու պաշտօնը կատարելով երկնից պատգամաւոր հրեշտակը և իրրեւ առաքեալ Նախախնամութեան է նա, որ պարտաւորուած է չգիտցողներուն ճանչցնել Նախախնամութիւնը և ամբաստանողներուն առջև արգարացնել զայն : Ինչպէս արեւը՝ որու լուսափառ ընթացքը Հիւլենակին փառքը կը քարոզէ ամեն աչքերու, նոյնպէս հարուստը իր բարեբանութեամբ՝ աստուածային իմաստութիւնը և մարդասիրութիւնը կը հռչակէ ամեն սրտերու : Որչափ որ հարուստ մը ապահամ՝ առատաձեռն է զգայուն կա անո զօք, զարհուրանաց կամ՝ միթիւրութեան առարկայ

մը կըլլայ ժողովրդեան, եթէ բարեբար է՝ աստուած մը, եթէ անպիտէ՛ հրէշ մը :

Արդ ինչ է աղքատ մը ըստ աշխարհի. — Բաւրէ, որչափ անթիւ գոյներով կընկարուի նա մեր աչաց առջև :

Աղքատը մարդոցմէ անջատեալ և տարագիր էակ մ'է և բնութեան տխուր ու յուսի մասը կը կազմէ, որ կընմանի, կըսէ իմաստունը, կարծես Նախախնամութեան աչքէն խուսափած արարած մը, որ նուաստաբար կըսողայ երկրիս մակերեւոյթին վրայ, որու ճակատին վրայ թշուառութիւնը իբր թէ դրոշմած է ամթիւ նախատինք իբրեւ յայտանիշ մը : Թափառական, փախստական և իբրեւ մարդկութենէ արտաքսեալ, կընմանի այն կայծակէ զարնուած վայրերուն, որ մարդս սիրափափազ միայն կարող է մօտենալ : Աղքատին պատահողը վիշտ կ'զգայ, իսկ անոր մօտեցողը սոսկում : Կարծես շնորհք մ'եղած կըլլայ, եթէ անոր վրայ խօսուի, մարդկութիւնը աւելի դժբաղդութեան քան թէ արժանաւորութեան օրէնքով կը դատէ զայն : Նաեւ ոչ ոք կը զիջայ անոր վրայ, այլ միայն դժկամակութեամբ կ'օգնէ անոր, որով խեղճ աղքատը այնչափ պզտիկ կը մնայ որ իւր էութեան վրայ կարմրելով կամնայ, կարծես թէ դժբաղդը ըլլալով մարդ ըլլալէ դադարած է :

Նախախնամութեան կարգին մէջ ընդհակառակն աղքատը անոր գործոց կերպիւ իւր քառնէն ցանկալի արարածն է, և իբրեւ իւր իմաստութեան գաղտնիքը՝ աղքատը իբրեւ պատուական և ամենակտրեւոր ընկեր հարուստին

քով դրաւ, և կամեցաւ Արարիչը որ հարուստը աղքատին պաշտպան ըլլայ, և աղքատը հարուստներուն փրկիչը, որ աղատէ զիրենք երկրիս վրայ իրենց պատահելիք արկածներէն ընկերութեան մէջ հրահանգելու միջոցներ նուիրելով անոնց : որք երկիւք գնելու պիտի ծառայեն իրենց, այնպէս որ Նախախնամութեան կարգին մէջ, աղքատը դատաւոր մ'է, որ իւր ձեռքին մէջ կը բռնէ մեծամեծաց և հարստաց ճակատագիրը, որ անոնց գլխուն վրայ օրհնութիւն կամ անէծք կը դրի :

Վերջապէս ի մի բան թէ հարուստը և թէ աղքատը Նախախնամութեան կարգին մէջ մեր կարծած գաղափարներուն հակառակն են : հարուստը Նախախնամութեան պաշտօնեան է իսկ աղքատը Նախախնամութեան ամենասիրելի արարածն է : հարուստը իւր հրամանները և աղքատը իւր իրաւունքներն ունի, մէկը տալու և միւսն ընդունելու համար : Եւ ինչպէս որ Նախախնամութիւնը կը հանգչի ծնողաց վրայ ընտանիքը կը թելու համար, օրհնող իրերու վրայ՝ ընկերութիւնը լաւ կառավարելու համար, թաւադաւրաց վրայ՝ Տէրութիւնը բարեւոր վարելու համար, նոյնպէս ևս հարուստը ըրաւ աղքատաց հոգածութեան համար : Արարիչը շատ բարեք տուաւ անոնց, որ չունեցողներուն բաշխեն, և իրենց ունեցած առատութեամբ ընցնեն այն անընկալեալ, զոր թշուառութիւնը իրենց և իրենց նմաններուն մէջ տեղ դրած է :

Գրականութիւն
Թարգմանեց Վ. Կ.

տակաճանձնի զոր ունենալ առ Ազգն և առ ստորագրող տէրութիւնս : Բանակին շարժման վիճակին մէջ գրուելուն պատճառաւ ըլլալիք զոհողութիւնը Ազգը առ ոչինչ կը գրէ : որուն յայտնի ապացոյցն է ազգին ցոյց տուած փոյթն ու փափագը : Թագաւորական ճառն կը յայտնէ նաեւ թէ՛ մասնաւոր իրողութեանց և փոխառութեանց ծրագիրներն ընդ փոյթ ժողովին նկատողութեան պիտի ներկայացուին , և մատուոր մեծամեծ օգուտներու յուսալից եռանդ շարժող քաջալերական խօսքերով կը վերջանայ :

Եւստի «Արշան» կը յաւելու թէ՛ սոյն ճառն մեծ տպաւորութիւն ըրած է ոչ միայն ժողովին այլ բոլոր հեղինակ վրայ , որք հաւանութեան ձայներով և կեցցէներով յայտնած են իրենց մեծ գոհունակութեան զգացմունքն :

Մի քանի օր ետքը կազմուեցաւ հեղինական նոր նախարարութիւնն հետեւեալ կերպիւ Պ. Գուժնտուրոս առաջին և արտաքին գործոց , և առժամեայ կերպիւ գաւառական գործոց նախարար : Պ. Սօթիքոբուլո , ելմտական գործոց նախարար : Պ. Բաբա Միխայիլով , ներքին գործոց , և առժամեայ կերպիւ հասարակային կըրթութեան նախարար : Պ. Վալթիմուր հրաժարմանէ ետքը Պ. Անտոն Մամրոմիխալի , պատերազմական գործոց նախարար : Պ. Պուպուրիս ծովային գործոց նախարար :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ

Վէրի ընդ բաշան Տուրքիայի Մոնթենէկոյի իշխանութեան յանձնումը կատարելու մասին չյաջողելով իր հրաժարականն կուտայ , ըստ ոմանց պաշտօնանկ կըլինի : Նման կը յաջողէ Տէրվիլ բաշա , որ արդէն Մոնթենէկոյի իսլամ բնակչաց համարումը ստացած լինելով՝ մեծ յոյս կայ որ յիշեալ գաւառակը յանձնուելու կարգադրութեանց մէջ պիտի յաջողի :

—Եպիսկոսի և Թեոֆիլոյ մէջ կայսերական զօրաց թիւը բազմացնելու մեծ փութանքով ինքն կ'ըլլայ : Կ'ըսուի թէ՛ նոյն տեղի զօրաց թիւը 60.000ի պիտի հասնի :

—Կը հաստատեն թէ՛ Կ. Պօլսոյ անդղիական դեպքան Պ. Կօշընի տեղ լրտ Նէքիլը պիտի յաջորդէ , կը յիշեն ընթերցողք որ Պ. Կօշըն իր պաշտօնի սկզբնաւորութեան ժամանակէն յայտնած էր թէ՛ ինքն խորհրդարանին մէջ պաշտօն ունեւոր , Կ. Պօլսոյ մէջ վարելու պաշտօնն կարճ ժամանակուան համար պիտի լինի :

Լորտ Նէքիլը ծնած է 1819ին ինքն Սկովտի-

ակա՝ ազնուականաց կարգէն է : 840ին առաջին անգամ գլխաւորական պաշտօն ստանձնեց Վիեննայի ու գլխական դեսպանատան իր կցորդ պաշտօնեայ : 1843ին Կ. Պօլսոյ դեսպանատան կցորդ նշանակուեցաւ : 1846ին Նաբոլիի դեսպանատան քարտուղար եղաւ , միևնոյն տեղը 1849ին գործակատարի պաշտօն ստանձնեց : 1852էն 1854 Բէրլինի դեսպանատան քարտուղար մնաց : Այնուհետեւ յատուկ պաշտօնով մը Պրուսիա և Երուսաղէմի դիւանագլուխ : 1855ին Թեսալոնիկէ անցաւ : 1857ին Ուոլինի դէնի մէջ երրորդ կարգի դեսպան անուանեցաւ : Բիւր մը ետքը նոյն պաշտօնով Հոլանտա դիւանագլուխ : 1860ին Բէրլինի դեսպան և 1864ին Պէրլինի դեսպան անուանեցաւ : Ետոյ անդիական Հնդկաստան կ'աւելու Մատրասի կառավարիչ եղաւ 1866էն մինչև 1872 : Եւ երբ լրտ Մայո սպաննուեցաւ , սա Հնդկաստանի փոխարքայութեան տեղակալ ընտրուելով լրտ էլ թիւրք պատուոյ տիտղոսն ստացաւ :

—Երզնկայէն և Ալինէն Մախի ուղղուած գիրերն հետեւեալ քրդական գիւղացիներէն են կը յիշատակեն :

—Հայազգի պարկեշտ երեսնամեայ անձ մը , որ Ղուզուլճանի գիւղերն առուտուր ընել կերթար շատ անգամ , անցեալ շաբթու հրացանով կը զարնուի Գիւրտերէն , նոյն իսկ Ծահ—Հիւսէյինի սեփական տեղ մը : Կ'ըսուի թէ Ծահ—Հիւսէյինի եղբայր Թահիր պէյն է զարնողը Զարնուղը երբ օր վերջը մեռաւ :

—Ալինէն կը գրեն թէ Զմբէկաճագի գիւղերէն Պաշ—Վաղդէնիկի և արքունի պալատան դռնապան հաճի Մուստաֆա աղայի եղբայրն և Հուտուտի Ապտիւրահման աղա անուն երկու թուրք քանի մը ընկերներով Կ. Պօլսէն իրենց հայրենիքը վերադարձած միջոցին , Քարա—Տիւսարի և Ակնայ մէջ տեղ Բարա—քիւթիկ կոչուած տեղը վրանին աւազակ Գուրդեր յարձակելով զանոնք վիրաւորել և քովերին գտնուած 1000 ոսկոյ աւանդ դրամները յափշտակել են : Բաց յայտնեն Գուրու—Չայէն Ալին երթալիք 500 ոչխարի հոտ մը Սաէ կոչուած տեղը Գուրդերը յափշտակել են : Սոս 4 ժամ հեռաւորութիւն ունի Ալինէն , Երեւան յափշտակիչ Գուրդը Ակնայ մօտ Զոյի ըսուած տեղն ապաստանելով Ակնայ անցուղարձն արգիւր են :

—Կ. Պօլսոյ Համիտի անուն կայսերական դամբարանը գողեր մտնելով ծանրագին առարկայներ կողոպտել են : Բայց քանի մ'օր ետքը գոհարեղեններէն մին Բէրայի ոսկերիչի գնելով

ուստիկանութեան պաշտօնատան յանձնել է , որով կը կարծուի է գիւրուութեամբ պիտի գլուխ յիշեալ աւազակաց հետքը :

—Ս ծովի մէջ հազարն ու յոթորիկ մի ծագելով մեծ մը անոն պատահել են , առայժմ իմացուած է թէ երկու առագաստաւոր նաւեր ցամաքը ինկելու և 3 հոգի իւր դուր են :

—Նաթընթաց թուով ծանուցած էինք թէ քրդական ապստամբ հրոսակներ Պարսկաստանի սահմանները յարձակելով մեծ կոտորածներ ըրած են , և թէ՛ Պարսկական կառավարութիւնն բաւական զօրք յուղարկած էր գործոյն առաջն առնելու համար :

Այժմ կ'իմանամք թէ՛ Կ. Պօլսոյ Պարսկական դեսպան Միքայ Մօհսին խան յատկապէս Բ. Դուռն երթալով քուրդ ապստամբաց օսմանեան երկրէն Պարսկաստանի սահմանները յարձակելու նուն վրայ երկար խօսակցութիւն ունեցելէ վսեմա . Ասիմ բաշային և նորա խորհրդական Տատեան վսեմա . Յարութիւն Պէլին հետ Պարսկական դեսպանն տեղեկութիւններ ինքրերէն է այն միջոցներուն վրայ զորս Օսմանեան կառավարութիւնն պէտք է ի դորդ դնել յիշեալ քրդական հուղիկահարութեանց առաջն առնելու համար : Բուսայի է որ կայսերական կառավարութիւնն ազդու միջոցներով պիտի փութայ օր առաջ զսպել քրդական շարագործութիւնը որպէսզի այս երկու սահմանակից տէրութեանց մէջ եղած բարեկամական յարաբերութիւնը չցրտանան : Այս կետը բաւական ազդու յօդուածով մի բացատրած է Կ. Պօլսոյ մէջ հրատարակուած Ալիէր պարսկական լրագրութեան —Զրոյց կայ թէ՛ Հոմի օսմանեան դեսպան Թիւրհան Պէյ , որոյ Կ. Պօլսոյ կանչուելը նախորդ թերթով ծանուցած էինք , Լոտտին դեսպան պիտի զրկուի փոխանակ Միւսիւրիս բաշայի , որ Կ. Պօլսոյ պիտի կանչուի վեհա . Սուլթանին խորհրդոյ հաղորդ նախարարի պաշտօն վարելու :

—Կ. Պօլսոյ մէջ շրջաբերուած կեղծ դրամաց առատութիւնն , հակառակ ուստիկանութեան ամեն ջանից կը շարունակուի , թերեւ և դաւառներու մէջ ալ փոխանցուի ուր աւելի գլուխ է տարածուելը : Մեծ զգուշութեան կը կարօտի . քանզի յիշեալ կեղծ դրամաց նմանութիւնն այնքան ճիշդ է մինչդէ ճշմարիտէն որոշելը յոյժ դժուարին մինչև անգամ վարժ մարդոց համար :

—Վերջին լուրերն կը ծանուցանեն թէ Պարսկաստանի սահմանները արշաւող քուրդ հրոսախումբերն Ապտուլահ անուն մէկը ունին իրենց

ՊՍԱԿ ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ

(Տես լրագրոյս 11514152 բիւերը :

ԻԵ.

Իշխանուհին եւ բնագոյն

Բայց և փոքրիկ իշխանուհին ի ծոց մաքուր կոյս երամին կը զարգանայր կ'աճէր տիօք իմաստութեամբ և ի շնորհօք : Սիրուն մօրմէն կաթով ծրածած անկեղծ բարուց ու քաղցրութեանց շնորհիւ բընէ էր ժառանգած թագապետական հօրը փառաց Այն պանծալի վրանութիւն օգոստոսիառ և վեհ արիւն :

Եւ վերջապէս իր հօրն ու մօր բընութեանց մէջ սիրուն ինչ որ եւ հրապուրիչ կը գտնուէր , կազմեց գեղոյ մ'ընտիր պատկեր : Այսպէս՝ կայսառ իւր հասակաւ և վեհ բարութիւն ամենագրաւ Արեւափայլ նա կը իրայլէր բնութեան հրաշից միակ պատկեր : Արքունական ապարանին աւագործար անձերէն մին :

Տարիքով դեռ երիտասարդ խիստ գեղեցիկ և մեծազարդ , Անակնկալ մի դիպուածով լուսամուտէ մը տեսնելով , (կուսաստանին վանդակն էր այն , ուրտեղ կեցած էր վառվառայն) Թանկարծ սիրոյ անչէլ կրակով իր բընկեցաւ համարողով :

Մէրը ըզգաց , այլայլեցաւ , խելքն է կարծես զլսէն իր բընազգում , մի գեղեցիկուհիք ունին յաւէտ անբացառիկ , Զոր բընութիւնն գողցես ինքնին տնկեց ի սիրտ կանանց սեռին , Այն է՝ տեսնել անորժանօք անբուժելի վէրքն անողք , Զոր աչերով իսկ կը գործեն , բայց և տեսնել գործած առնն :

Սոյն բընազգումը մեր վառվառէն նախարարէն սիրելին անդէն ըզգաց , և թէ՛ քանի՞ մեծ էր բացած վէրքին ոյժ մահաբեր : Ինչպէս պատշաճ է դեղուհեաց , սրտին սանձը դեռ չյանձնած , Ատեն մ'անոր դիմագրելէ ետեւ , ինքն ալ զայն կըսիրէ՝

Նախարարին ճիշդ հաւասար սիրոյ կրակով վայելաբար :

ԻԶ.

Արգելք սիրոյ

Մեծահամբաւ նախարարին , որ Աւոնեան ազգէ երկրին , Ռափայէլ էր անուն կոչման , ճեռն հինաւորաց ասպետական , Վեհ էր տեսիլ նորա համայն , քալ և կտրիճ միանգամայն , Զոր թագաւորն շատոնց ի վեր եռանդագին կը փափագէր վառվառէին պըսակելով փեսայ առնուլ զանի իր քով :

Ուստի անչափ ուրախացաւ , երբոր լսեց թէ համալրու Սէրն այս երկուքն ի միասին գաղտ շաղկապած է սրտովին : Բայց այլանդակ մի խորհրդով , այս երկուքն ի մեծ վրդով , Միտրք գըրաւ այնպէս ընել որ վառվառէ ու Ռափայէլ իրենց կենաց ամենամեծ երջանկութիւնն սիրայեց Դառն անձկութեանց գընով դընեն , և հուսկ ապա իրար գտնեն :

Կ'ըսէր ինքնին . կուղեմ թէպէտ երջանկանալ նոյա յաւէտ , Բայց պէտք է որ տարակուսանք իւրեքդոտներ , ահ և վրտանդ իրենց դաժան փորձերուն մէջ առաւել ևս վառեն անչէլ Անոնց սիրոյ կայծակն անմեղ , ամրապնդեն զանոնք մէջտեղ : Միանգամայն իմ ամուսնոյն հրահանգուի համբերութիւն :

Ոչ թէ յիմար իմ կասկածներս փարատելու մըտք , ինչպէս Մինչև ցայսօր կը փորձէի , քանզի չունիմ այլ և ոչ մի Ոչ տարակոյս և ոչ խէթ ինչ Դարուհիս վրայ ոչինչ :

Այլ որպէսզի տեսնէ ախարհ անոր անգիւտ ձիւքն անհամար , Անոր չընորհքն ու քաղցրութիւն , բարոյքն անմեղ և իմաստուն : Տեսնէ ախարհ և հիանայ , և արժանի փառօք ըզնա Պապուստիւն , և Արարչին մեծ գոհութիւնը տայ սրտագին :

Անմիջապէս ժողովրդեան հրապարակաւ կը յայտնէ բան .

Թէ՛ այն աղջիկն , որ ունեցաւ իր անյարմար նախկին կընաւ , ի հասակին դեռաբուսիկ հողն էր մըտած վաղամեռիկ , Եւ թէ՛ դահուն արքունական չըլլալով մի ժառանգ բնակաւ , Հարկադրուած է ուրիշ տեղ այս պակուութեան փնտրել մի գեղ ,

պարագային, զոր իրեն աղջկային սուրբ մի կը-
պաշտեն, և որ իրեն որդիքն նախապարձակ
եղեր են Պա, սից հողը մտնելու: Կըհաստատեն
նաև թէ քաղաքացի կոտորածին 5000 հոգի
զոհ գացաւ: Եւ որք մեծաւ մասամբ Հայ են:

ԱՉԳԱՅԻՆ

Երկու մեծ և կարեւոր խնդիրներ, որ Ազգին
իրապէս օգտակար են, կեդրոնական վարչու-
թեան Ազգային ժողովին ատենանք հանուած կը
տեսնենք: Առաջինն է Խուսապէմի վանուց
ներքին կանոնադրին, երկրորդն է Արմաշու
վանուց Գեր. վանահօր առաջարկած ազարակ-
վարժարանի մը հաստատութիւնն: Մեծ ուրա-
խութեամբ կ'իմանամք որ առաջինն իրագոր-
ծուած է: Իսկ երկրորդն չէս յուսալից
եմք որ ընդ փոյթ իրագործուի: Այս մասին Կ.
Պօլսոյ Մօֆ. քաղերն հետեւեալ կերպիւ կ'իսօսի:

Ազգային ժողովը գումարեցաւ երէկ ի Ղա-
լաթիւ, ընդ առժամայ նախագահութեամբ
Գեր. Տ. Սիմէօն սրբազանի և ատենապետութիւն
Մեծ. Խուսապէան Տ. Էֆէնտիի:

Ատենական գործողութեանց լրանալէն յե-
տոյ, ժողովն առաջնութիւն տալով Ս. Երուսա-
ղէմի վանուց կանոնադրին վաւերացման խնդ-
րոյն՝ որ օրակարգին երկրորդ խնդիրն էր,
Ազգային Պատուիրակ Աշխատանքի վանուց Ստե.
փանքաշայի ընդարձակ տեղեկութիւնները լսեց
վանուց բարեկարգութեան և պարտոց նը-
կատմամբ, և զանոնք խիստ բանաւոր և գո-
հացուցիչ դանելով, Նորին վսեմութեան կողմէ
խմբագրեալ նոր կանոնադրին՝ որ կանխաւ բո-
ւոր երեսփոխանաց ցրուած էր, ամբողջապէս
ընդունեց, սա բարեփոխութեամբ միայն որ
փոխանակ Յի. Չ. տարիէն վերաբնութեան են-
թարկի և երեսփոխանաց Պատրիարքին անուան
յիշատակութիւնը ճիշդ Սահմանադրութեան
տրամադրած կերպիւ լինի, այսինքն Կ. Պօլսոյ
Պատրիարքին պէս ուխտ և երդում ընելէ յետոյ:

Յետոյ ժողովը շնորհակալութեան քուէ տը-
ւաւ վսեմաւ Ստեփան բաշայի այս ազգօգուտ
ծառայութեանը համար, և ատենանք վերցաւ
ժամը 11ին՝ երեք շարաթէն վերստին գումար-
ուելու որոշմամբ:

Ո սուսնական խորհրդէն և վանորէից խոր-
հրդէն կաղմեալ յանձնախումբ մ'երէկ Արմաշու
վանահայր Գեր. Տ. Խորէն սրբազանին մի ծրա-

գիրը քննեց յիշեալ վանքին մէջ երկրագործա-
կան դպրոց մը հաստատելու մասին: Բայց եղ-
րակացութեան մը չկրնայով հանել, իւր խոր-
հրդածութիւններն յառաջիկայ ուրբաթ օրը
շարունակել որոշեց:

Ահաւասիկ ազգային ժողովոյ կողմէ Ս. Պատ-
րիարք Հօր մատուցուած ուղերձին պատճէնը:

«Բարձրաշնորհ Տէր,

Ազգային ժողովն ներկայ շրջանի բացման
առթիւ պատիւ ունեցաւ լսել Ձեր Ամենապատու-
ութեան գիրն, որով Գեր. Տ. Մատթէոս ե-
պիսկոպոսին կը յանձնարարէր բանալ ժողովն և
իմացնել թէ «Յուսահատ չէք Աստուծոյ ողոր-
մութենէն»:

«Բարձրաշնորհ Տէր, մեր հաւատքն անկեղծ
է Աստուծոյ ողորմութեան վերայ, զի չլքաներ
նա զարդարն. մեր յոյսն մեծ է մեր վեհապե-
տին օգոստափառ Սուրբանին արդարախօսու-
թեան և իւր բարձր դանակաց արդարափո-
րութեան վրայ: Իսկ Ձեր Ամենապատուութեան
վերայ ժողովս կը շարունակէ այն վստահութիւնն
որով ձեր ջանից յանձնած է Ազգային խնդիրն:

«Ժողովս աներկբայ է, Սրբազան Տէր, որ
ներկայ պահուն, յորում Հայաստանի բարենո-
րոգման խնդիրն աշխարհավարական ասպարի-
զին մէջ կը յուղուի, պիտի յարատեւէք Ազգին
անհրաժեշտ պէտքերը ճշդիւ ներկայել ում՝ որ
անկէ, և պիտի յաջողիք որ թերի գիտակցու-
թիւն և թիւրիմացութիւն Ազգին իղձերն իրա-
ցնող պայմանները չվտանգեն:

«Ձեր Սրբաշնորհութիւնը ժողովոյն ուշադրու-
թեան կը յանձնարարէ նաև ազգային Պատրիար-
քարանի և գործոց ներկայ վիճակն, յայտարա-
րելով որ անձնական տկարութեան պատճառաւ
քանի մ'ամիսէ ի վեր չէք շարունակեր նախա-
գահել ժողովոց, և թէ չգիտէք թէ տակաւին
որչափ ժամանակ պիտի պարտաւորիք այսպէս
ընել:

«Ազգ. ժողովս ցաւ ի սիրտ լսեց Ձեր Սրբազ-
նութեան սոյն յայտարարութիւնն և նկատու-
ղութեան առաւ ազգային գործոց տարտամ
վիճակն, որ Ձեր բացակայութեան պատճառաւ
օր աւուր ծանրանալու վրայ է: Սակայն ժողովս
կը յուսայ թէ վերջին օրերս քուէարկեալ վար-
չական օրինաց բարեփոխումը պիտի կրնայ Ձեր
Սրբաշնորհութեան օժանդակ լինել, և թէ վստա-
հելի ու պատասխանատու խորհրդական պաշտո-

նէից գործակցութեան շնորհիւ կարելի պիտի
ըլլայ Ձեզ ուղղութիւն տալ ազգային վարչական
գործոց, առանց չարաչար վաստակելու այն
պատուական անձն, որոյ առողջական յոյզող-
վիճակը մեծ ցաւ է Ազգին, և որ սակայն 1880
Օգոստոս 10ին հրապարակական խոստմամբ զոհ
նուիրուած է արդէն ազգային շահուց նուիրա-
կան սեղանոյն վերայ:

Սովելոց խնամող կեդրոնական Մասնաժողովի
խնդրանաց համեմատ Զմիւռնիոյ Ազգ. Քաղ.
Ժողովն քաղաքիս մէջ եղած երեք հանգանա-
կութեանց (Արմաշ. կանանց և օտարազգաց
Մասնաժողովներու) արդեանց հաշիւներու բո-
վանդակութիւնն հանդերձ նուիրատուաց ցան-
կերով անցեալ շաբաթ օր, Հոկ. 18 յատուկ նա-
մակաւ յուղարկեց առ կեդրոնական Մասնաժո-
ղովն: Արդէն մեր Գեր. Ս. Առաջնորդն՝ Թեմե-
րէն, ուր այցելութեան եղած է, յատուկ գրով
պատուէր յուղարկած էր որ Ազգային վարչու-
թիւնն փութայ յիշեալ հանդանակութեանց
հաշիւներու բովանդակութիւնն և նուիրատը-
ւաց ցանկերն հասուցանել հառ կեդրոնական
Մասնաժողովն:

Յիշեալ բովանդակութեան պատկերն է.

Հանգանակեալ գումարք.

Մասնաժողով արմաշ մէճիտ	335	17043.75
Մասնաժողով կանանց		12029.25
		29075

Որ կ'ընէ հատ մէճիտ	881.11
Ի ձեռն խառն Մասնաժողովոյ	
օտարազգաց, հատ մէճիտ	2593.28
ստակի զանազան տարբերու.	14.61
Արշէհիրէն հանգանակեալ	371.
	3855.00

Կեդր. Մասնաժ. յանձնուած գումարք.	
Ա. անգամ	Հատ մէճիտ 750
Բ. անգամ	131
Մեծ. Ղուկաս Եսայեանի ձեռամբ	2400
Ուշաք զրկուած ցորենի հաշուով	192
Արշէհիրէն ուղղակի զրկուած	371
Ծախք տպագր. վար գրուած	11
	3855

Ահաւասիկ սոյն գումարն է, որ Հայաստանի
ազգային հանգանակութեան գումարէն զատ,
սովելոց համար Զմիւռնիայէն հանգանակուելով
յուղարկուած և յանձնուած է կեդրոնական
Մասնաժողովին:

Որ է տոհմին արքայազուն ապահովել ժառանգութիւն
Յայտնեց նաև թէ՛ հարս մ'ուրիշ արգէն ընտրած է գեղանիշ,
թէ՛ քաջազանց է նա զաւակ, արժան կըրել արքեան պըսակ,
Եւ թէ վանքի մի կոյսերու շնորհալի բազուկներու
Մէջ է սընած ու կրթուած անմեղութեան հրեշտակ դարձած,
Չոր Թալուհի առնու պիտի սուրբ Պըսակաւ ըստ օրինի:
Երբոր այս լուրն ամենասփիւ տարածեցաւ բոլոր երկիր,
Ուստիայէին՝ ո՞վ էր կարող՝ նըկարագրել սրտին ահ դող,
Թալուհին կամքն ու հրաման պիտի բաժնէր զինքն յաւիտեան
Իր նորածիլ սիրոյն բովէն, հարկ էր մերժել ըզվառվառէն:
Նա յուսաբեկ կ'այրէր, կ'ողբար, դողցես երկուքն ալ շանթահար,
Զուր տեղ իրենց ծընած աւուր կ'աւաղէին ըզբաղդ տըխուր:

Ի՛նչ.

Պատմ. փորձ Գ. Արտաքստմմ

Իսկ Թալուհին առանց կրելոյ դէմքին վրայ նշան սըգոյ,
Դարուհիին կուգայ կ'ըսէ, «ալ աւելի մեծ վըտանդէ
Փրկուելուդ համար պէտք է որ այսօրէն զատուիս ինձմէ:
Բանդի արդէն ժողովուրդին մեծ ու պղտիլըն զայրագին
Անշուք տոհմիդ բնորոնութեան համար դժգոհ է միանգամ:
Երկրորդ բարս, զիս Խոսիպէ ընտրել մի հարսն ոչ դուղնաքէ:
Այլ արքայազն բարձր զարմէ ինձ Թալուհի տալ կըպնդէ:
Ուստի հրաժեշտ քեզ տալ պէտք է, քաջուիլ երթալ այսօր ասկէ:
Արդէն պատրաստ են քեզ համար հոգիի հագուստ մաշկեայ կամար,
Ելիր, հագիր ասոնք հիմա, և վերստին քաջուէ գընա:
Լեռք՝ Խոսէ հիւզիդ ներք: Բիշէ սպառի կենացդ արեւ:
Իս Դարուհի հանդարտ հեգիկ և անտրտուն կեցած լըռիկ՝
Մըտիկ ըրաւ իրեն համար խոսուած վըճիռն անգըթաբար:
Թէպէտ իր պարզ ու անայլալ դէմքին ներքև աղէտքն ու ջայլ
Խեղդել լափել ճիգ կըթափէր՝ հեղձամիջուկ շունչն էր կտրեր:
Այս դառնալիշտ հաստոյր հարուած առանց անոր քաղցրահայեաց
Գեղոյն վընաս ինչ բերելու՝ ցօղով լըցան աչերն աղու:

Եւ ըսկըսան մարդարտաշար գըլիլ արցունք դէմքէն ի վայր:
Ինչպէս երբեքն գարնանային եղանակի վերադարձին,
Արևափայլ մինչ է երկին, կ'անձրեւէ իսկ նոյն ատենին:
«Դուք ամուսինս սիրապըսակ և Թագաւորս էք բացարձակ,
(սաւ Դարուհին իբր ուշաթափ). որչափ ալ դառն է այս տագնապ
Լըսել վըճիռդ շանթահարող, այլ ակներե ցոյց տալ կարող
Պիտի ըլլամ Ձեզ թէ՛ չըկայ կենացըս մէջ բան մ'որ ըլլայ
Ինձ սիրելի յոյժ առաւել քան Ձեզ սիրով հնազանդ լինել»:

Ի՛նչ.

Հրաժարական

Կ'երթայ իր խուցն առանձնակի հանել իրմէ զարդքն արքունի,
Անդ հանդերձներն չըքեղաշուք կըմերկանայ լըռիկ, ծածուկ:
Դառն հառաչանք օրտէն կուգան, ինք իւր նախկին այն հովուական
Ցնցոտիներն պլլուելով, յոյժ ամօթխած ւաղէխորով՝
Կըմտենայ Թագաւորին հրաժարական զայս տալ վերջին:
«Ո՛հ, չեմ կրնար զատուիլ Ձեզմէ, մինչև Արքայդ ինձ չընկրէ,
Որ չըկրցայ օգոստափայլ սիրոյդ իմոյ հաճոյանալ:
Թշուառութեան իմ այս դժխեմ լուծք տանիլ թէև կարեմ,
Բայց չեմ կրնար ժուժել բընաւ՝ որ ձեր զայրոյթն համագըրաւ
վիշտ ձեր անձին ո՞հ պատճառէ, որ քան ըզմահ այդ ինձ ծանր է:
Ուստի ձեր մեծ գըթութենէն խոնարհաբար ես կըհայցեմ,
Անկեղծաւոր այս արտասուած ողորմելով սրտիւ գըթած՝
Ընել ինձի այս մեծ չընորհ, մոռնալ զայրոյթ ձեր այդ բոլոր:
Եւ այն ատեն միայն է հնար որ գոհ ապրիմ տըխուր իմ վայր:
Ժամանակի չղթայն երկար, նոյն իսկ և մահն ալ չեն կրնար
Անհաճութիւնս՝ որ ձեր վըրայ, հաւատարիմ և միտակայ
Սիրոյս ալ կայծն այլայլելով, մոռնալ տալ ինձ ձեր սուրբ գորով:
Այն գեղջկական խեղճ հագուստով Դարուհիին օրտադորով
Բանքն ու հըլու անուշութիւնն և մեծանձնեայ զգայմունք ողւոյն
(Որ արքային ըզԴարուհին առջի տեսած օրն ինչ ուժգին

(Պիտի շարունակուի)

Մեր պարտքն է լրջօրէն յայտնել մեր խորին շնորհակալութիւնն առ Գերաւ. Ս. Առաջնորդն քանդաքիս, որ իւր անգու յորդորանքներով, և անձնական օրինակաւ շարժեց զխորհրդակցութիւն թէ հարս, թէ դստիկայս և նոյն ինկ քաղաքիս պատուարժան օտարազգիքն, և անկեղծեամբ Ազգային վարչութեան և Մասնաժողովոց յաջողեցաւ վերոյիշեալ արգիւնքն գոյացնել և յուղարկել առ կեդրոնական Մասնաժողովն յօգուտ և ի միմիջարկութիւն մեր սովորեղբարցոյ:

—Մինչդեռ մեր Գեր. Ս. Առաջնորդն թեմական ժողովրդոց այցելութիւն ընելով՝ նոցա ուղորմելի վիճակը որչափ էր բարեկարգելու կ'աշխատի, եկեղեցեաց, դպրոցաց, եկամտից և այլն բարեւոք կարգադրութիւններ ընելով և քաղաքիս խորհուրդներ կազմելով, ուրախ եմք լսելով որ տեղական կառավարութիւններն ևս արժանաւայել յարգանքով կը պատուասիրեն Ն. Սրբազնութիւնն այնպիսի պատուաւոր ընդունելութիւններ ցոյց տալով որ թեմերու ոչ միայն ազգայնոց այլ բոլոր հասարակութեանց մէջ մեծ նշանակութիւն ունին:

—Գեր. Ս. Առաջնորդին սոցն երկամեայ բնակայութեան ժամանակ Աղգա. Գաղ. ժողովն, բոլոր յորդորանաց Ն. Սրբազնութեան, յարատեւ շարունակելով իր կանոնաւոր նիստերն ազգային բնութեան գործերու կարգադրութեանց հրապարակեցաւ պէտք եղած կարեւոր տնօրէնութիւններ գործադրելով: Սակայն մի քանի մեծ խնդիրներ, ինչպէս են սուրբ Երուսաղէմայ պարտուց բարձման խնդիրն, սովելոց շրջ. անգամ գաւառիս մէջ քայքայելու հանգանականութիւնն, Միացեալ ընկերութեան յատուկ նպաստ հաւաքելու առաջարկութիւնն և այլն պատշաճ համարեցաւ Նորին Սրբազնութեան վերադարձին և ներկայութեան վերապահել, որպէսզի յիշեալ ազգային կարեւոր գործողութիւնք Ս. Նախագահին միջոցաւ աւելի կանոնաւոր ուղղութիւն սկսուելով՝ նորին իմաստուն վարչութեան և հոգեւոր խորհրդանախագ շնորհիւ առաւել արգիւնաւոր լինին:

Կ'իմանամք թէ Ռուսիոյ դեսպանին հօրաքեռ Դամիանով Իլյանուհայն հայկական եկեղեցւոյ արարողութեան և երգեցողութեանը մասին յայտնած զմայլմանը և փախանձագին խնդրանքը վրայ Ս. Պատրիարքը մտադիր է եղեր մէկ կամ երկու շաբաթէն Բէրայի եկեղեցին յատուկ պատարագ մատուցանել, ուր ներկայ պիտի գտնուին յիշեալ Իլյանուհայն և Ռուս դեսպանատան բոլոր անձինք:

—Վանքից և Ուսումնական խորհուրդներն երէկ վերջապէս ինչ ինչ փոփոխութեամբ ընդունեցին Արմաշի վանուց Գեր. Վանահօր կողմանէ առաջարկեալ Հողագործական վարժարանի ծրագիրն, և որոշեցին տեղեկագրել Ս. Պատրիարք ձոր՝ առաջարկելով որ պէտք եղած 500 լիւրան կամ բաժանորդագրութեամբ և կամ ժամանակաւ Բարեգործական անուամբ ընկերութեան դանձած դրամէն հոգացուի:

Փոռնը



Ուրախ սրտիւ կ'իմանամք որ մեր Հնդկաբնակ ազնիւ բարեկամ Պ. Մ. Ն. Գալստյանի հարսանեկան հանդէսն կատարուել է ընդ ազնուափայլ օրհորդ. Գաթիկի թ. Է. Գալստարի 22 յետոյ ամսոյն անցելոյ ի Սուրապայա:

Կը բարեկամադրեմք սիրապալկ Ազնուական Գեոպային և Ազնուափայլ Հարսին երկար և երջանիկ կեանք, յուրախութիւն երջանիկ ծնողաց նոցա, և համայն ազգայնոց:

Սոյն բարեկէպ առթիւ հարկ կը համարիմք յիշել թէ քանի՞ օն համակրանայ և դովնտից նշմանաւոր են մեր Հնդկաբնակ ազգայինք:

որք թէ և սակաւաւոր ի թիւս, թէ և աւելի ազատ երկրի մէջ բնակեալք, համայն և այնպէս ակնածանք յարգելով ամուսնական սուրբ օրէնքն՝ ամենայն անհրաժեշտութեամբ նոյն նուիրական երջանիկ կապին շնորհիւ տուն և բնտանք բազմացնելու որով և Հայ սերունդն մշտնջենաւորելու յօժարափոյթ կընկրտին և տարուան շրջանին մէջ բաւական ամուսնութիւնք կընկնին: Մինչդեռ ցաւօք սրտի կը տեսնեմք որ Տաճկան տանի անգայնոց մեծ մասն: Իմանալեմք մեր քաղաքի ազգայնոց ամենամեծ մասն բոլորովին անհոգ և անտաքեր են սոյն ազգանուէր պարտքը կատարելու մասին, երիտասարդք առաւել կը սիրեն կղզեացեալ կեանք վարելու որուն հետեանքն է դժբաղդ ծերութիւն մի և անտուն անտոհմ և անխնայաւ կորուստ: Այս պատճառաւ ամուսնութիւնք յոյժ նուազ են քաղաքիս մէջ, այնչափ նուազ՝ որ եթէ ուշադիր նկատելու լինինք սոյն կենսական յոյժ մեծ խնդիրն, այս ձախող ընթացքն շարունակուելով դար մի շանցած քաղաքիս մէջ Հայ ժողովուրդը չլինար մնալ: Եթէ ակնարկ մի ձգենք մեզ շրջապատող ազգաց՝ մանաւանդ յունաց վրայ, տարակոյս չկայ որ ամօթահար պիտի շահանք իմանալով որ ամիսն թերեւ 500 է աւելի ամուսնութիւնք կը կատարուին անոնց մէջ ընդհանրապէս մեր մէջ տարին հազիւ 20 հարսանիք կ'ըլլան:

ՏԻՊԱԿԱՆ ԽՈՐՀ

Անցեալ շաբաթ օր փոթորկալից անձրեւներն սկսան և կայծակ մի ինկնէ Պաւլոսպատի մօտ դաշտի մը մէջ: Զարմանալի է որ ոչինչ վնաս պատճառեց նոյն դաշտը շանթահար տեղւոյն մօտ գտնուող մարդու: Երեքաբլի իրիկունէն կրկին սկսելով օրտնդութիւն անձրեւներն անքնհատ տեղեցին մինչև հինգաբլի անաւատ: Նայն օրը արեւափայլ օդերն սկսան:

—Ինչպէս նախորդ թերթով ծանուցած էինք քաղաքիս կազմ ընկերութիւնն ըստ նոր պայմանաց, որ շնորհիւ մեր քնդհանուր կառավարիչ բարձրա. Միտհաթ բաշայի հաստատուեցան ընկերութեան և քաղաքացեալութեան պայմանատանց մէջ: Ընտնարկեց ի գործ, Եւ Հով. 1 (Ն. Տ.) բէթրօի նոյն լապտերներն վերցուած և անոնց տեղ կազմ լապտերներն սկսած էին պայծառ կերպիւ հուսաւորել մեր փողոցները: Քաղցր է մեզ յուսաւ որ ըստ նոր պայմանաց արդէն եղած 700 լապտերներուն վրայ 300 ևս աւելնալով լապտերաց թիւը 1000ի պիտի հասնի: Պէտք մի՛ որ զգալի կերպիւ կարեւոր է քան զառն քնակնաց դիշերային անդորութեան: Քանզի անաղակութիւնք և ոճրագործութիւնք այնքան շատցած են մինչ զի ցորեկ ատեն անգամ յանգուգն ոճիւրներ կը դործուին, ոչնչի անաւել զիշերներն, մանաւանդ այնպիսի փողոցներ որ բոլորովին զուրկ են կազմ լապտերաց լուսաւորութենէ:

—Մեր վերջին թիւէն գլին քաղաքիս մէջ 2 հրդեհներ տեղի ունեցան, մին՝ նախկին մաքսատան մօտերը գտնուող վարի կաշնի Շտեմբարանի մը մէջ, որ 400 լիւրայի վնաս տուաւ, և որ Նորթէրն ընկերութեան կողմէ ապահովեալ էր հրդեհի դէմ: Իսկ միւսն Սքալապրինի փողոց տան մը մէջ, որ 150 լիւրայի վնաս պատճառեց, և որ իւնիօն Գոմէրիալ ընկերութեան կողմէ հրդեհի դէմ ապահովեալ էր:

—Պիթ բազար ըստած շուկային մէջ գերծակ մի հազ մի զգեստ վաճառած և դնող տաճիկն յետոյ դարձուցած էր: Դերձակն չէր հաճեր յետոյ ընդունիլ և առած ստալը վճարել: Վէճը մեծնալով երկու ոտքկանք կը հասնին անաղքն առնելու: Ասոնցմէ մին դերձակին յամառութիւնք տեսնելով իր սուրը կը քայլէ, և դերձակն իր ըրիւրվըրոյն կը վրաւորէ զանի մահալու հարուածով, և բաւական Համարելով կը յափշտակէ վրաւորեալ ոտիկանին դէնքը, և կը զարնէ զմիւս ոտիկանն: Քաղաքիս Նէս Սփռնի յունական լրագիրն կ'ըսէ թէ սոյն վերջին ոտիկանն հետեալ օրը մեռաւ: Երեւնագործն անմիջապէս ձեռքակալուելով բանտարկուեցաւ:

—Մեծ ու անութեամբ կ'իմանամք որ մեր ազնիւ հայրենակից Մե կերեան Պ. Յակոբի սիրասուն որդի Պ Ստեփան Յ. Մերկերեան մի քանի ընկերներով լիէժի դպրոցին արուեստից ձեռակերտուած ոց բաժնին մէջ անաղին տարուոյ ուսումնարանը մտած է:

—Քաղաքիս մէջ Արժօն (ներգաշնակութիւն) անուամբ յունական լրագիր մի սկսաւ հրատարակուիլ: Յիշեալ լրագիրն ամենեւեց է, և ունի վարժ և բանիւրուն խմբագիրներ: Կը բարեմանթենք նոցա յաջողութիւն լրագրական ասպարիզին մէջ:

—Քաղաքիս մէջ լուր մի տարածուեցաւ թէ Սէլանիկի քաղաքացեալական խորհրդոյ նախագահ Արթի Պէյն երեք անձերու ընկերութեամբ Էնիէհէր կոչուած անգարակը գնացած ատեն, հեղին անաղակներու ձեռք ինալով հեղինական սահմանները տարուել են: Անաղակներն մեծագումար դրամ կը պահանջէն զանոնք ար. ձակելու: Կառավարութեան կողմանէ այս մասին լուր հաղորդուել է հեղին իշխանութեան:

—Վիճակիս բարեկամ Ս. Առաջնորդ Տ. Մերկերեկ Ս. Արքեպիսկոպոսն երէկ իրիկուն ժամը շին ըստ եւրոպայ. Սթեֆան շոգենաւով ժամանեց ի քաղաքս, կատարելով իւր այցելութիւնքն ի թեմս: Արդէն երկու օր յառաջ հեռագիրն ծանուցած լինելով Ն. Սրբազնութեան քաղաքս մտնելու օրն՝ Արթ. Մարկար Ս. Հայրն, և քահանայից գահէն և Ազգային վարչութեան անդամներէն ոմանք ընկերութեամբ գնացած էին ընդ անաղ Ն. Սրբազնութեան, որ և ժամը Յին հասաւ յԱռաջնորդարան յուրախութիւն իւր սիրելի հօտին:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Անիօն: Շուրջ 216 կողով վաճառեցան զանազան գինեքով: Վերջին գինն 220 դրի չէրին:

ԲԱՄԱՐՈՒՏ: Վաճառեցան 1200 կենդինսոր 96—114 զուրի կենդինսորն ըստ տեսակին:

ԲԱՄԱՐՈՒՏ: Եսթնեկիս վաճառուներն գրեթէ 150 հակ մեքենայուած 380—384 զուրի կենդինսոր: Ինկ Ատանայի տեսակէն ևս 150 հակ վաճառեցաւ 340 զուրի կենդինսոր:

ՍՈՒՍԱՐ: Շարժման մէջ է 150.000 օխայ վաճառեցաւ 110—111 փարսի:

ՍԵՒ ՉԱՄԻՉ: Միւսնոյն գիներն հաստատ կը շարունակուին, 10.000 կենդինսոր վաճառեցաւ ի գին 103 1/2—105 զուրի կենդինսոր:

ԾԱՆՈԹՅՈՒՄ

ԳԵՂԱՐԱՆ ԵՍՍԷՑ ԶԱՄԱՐՈՒՏ

Իզմիր Պատմական փողոց երկաթուղի կայարանին գիմացը թիւ 47:

Ներկայիս կըլայտարեմ արդոյ հասարակութեան քե Անգղիական եւ Բարբի ամեն կերպ ճոր եւ ընտիր տեսակներէ մարուր դեղեր բերել տուած եմ: Պետք ունեցողներն կարող են ստանալ խիստ աճան լինելով: Նաեւ Պետարանիս մէջ բոցկական այցեն ուրիւնք կըլլան ամեն պէտք ունեցող անձերոս: Պետարանս յաճախող բոցկներն են պարսկացի Թագաւոր վարդան, Մ. Խրիսթոսեանքի, Մ. Նիքոլայիս եւ Ա. Պրոսկերի: Եւրասիոյ համար կարեւոր յոգուածներն կըլտուի 2 փեղերի բանձրացեալ կաթ, lait condensé, եւ գտուած, մարուր ու ձերմակ եւ կարմիր ջկան իւր huile de foie de Morue: Ստացողք փորով պիտի իմանան դեղերուս բարեկէսն եւ մեծապէս գոհ պիտի լինին: ԵՍՍԷՑ ԶԱՄԱՐՈՒՏ

Պարոն Ալլիսեղա գիտութեանց և դպրութեանց գիւշերթիկ դպրոց մի բացած է ի Պոլսոյ, ուր արտաքին անաղերաներ ևս պիտի ընդունի: Ընտանիքի հայրերը կը բարեկրթին յիշեալ հաստատութիւնն օգուտ քաղելով իրենց զաւակները խրկին վտանգութեամբ, հաւատարմութեամբ թէ այսպիսի արժանաւոր Տեսուչի մը խնամոյ ներքե իրաւ ընտիր դաստիարակութիւն մը ստանան:

Տէր լրագրոյց:

Գ. Լ. Գ. Պալլապրան: